դառնում, որ դրանց դեմ մղվող հերոսական պայքարով հայ զինվորությունը ակամա հանդես էր գալիս որպես օսմանցիների դեմ մարտնչող իրանական զինված ուժերի դաշնակից։ Իսկ այդ ուժերին Իրանի արևմտյան շրջաններում և հատկապես Ատրպատականում գլխավորում էր Սեֆևիների գահի օրինական ժառանգորդ շահ Թահմասպ II-ը։

Պատմողական սկզբնաղբյուրների տվյալներն ու դիվանական նյութերը հաստատում են, որ 1722 թ. իրեն շահ հայտարարած Թահմասպ II-ը, 1723 թ. գտնվում էր Ատրպատականում, որտեղ նա փորձում էր միավորել ղզլբաշներին հավատարիմ բեկլարբեկիների, խաների ու ռազմիկ ցեղախմբերի ամիրների զինված ուժերը՝ Սյունյաց և Արցախի հայության ապստամբությունը ճնշելու և օսմանցիների ներխուժմանը դիմագրավելու համար։

Նադիր շահի պալատական պատմիչ Մուհամադ-Քազիմը, պատմելով աֆղանների կողմից Սպահանի գրավումից և Սեֆյան վերջին շահ Սուլթան-Հուսեյնի գահազրկումից հետո նրա ավագ որդու՝ Թահմասպի, վտարանդիության մեջ իրեն շահ հռչակելու մասին, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև երկրում ծայր առած անիշխանության և ծայրամասերում, այդ թվում հատկապես Հայաստանում սկսված և արագորեն ծավալվող ապստամբությունների դեմ Թահմասպի վարչաքաղաքական ու ռազմական գործունեության վերաբերյալ։ Նա գրում է, որ գահակալությունից անմիջապես հետո շահին են ներկայացել Գանձակի և Ղարաբաղի կողմերից եկած պատգամավորներ, որոնք տագնապով պատմել են հայերի ապստամբության մասին, ավելացնելով, որ այն ծավալվելով սպառնագին բնույթ է ստացել և եթե շտապ միջոցներ ձեռք չառնեն, շուտով Գանձակի և Երևանի բերդերը ևս նրանց ձեռքը կանցնեն[12]։

Նոր միայն Բարձրագույն դիվանի վեթիլ նշանակված Մուրթուզա-կուլի խանը կարգադրում է ամիր Ռուստամ Կարակոյունլուին, քսան հազարանոց բանակով գնալ ճնշելու հայերի ապստամբությունը։ Միաժամանակ հրահանգ է ուղարկվում Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Սալմաստի, Դումբուլիի, Բարգուշատի և այլ շրջանների խաներին ու ամիրներին, որ անմիջապես իրենց զորքերով գան և հիջր. 1135 (1723) թ. լինեն Թավրիզում։ Մինչ նրանք կներկայանային, պալատականներից Մուհամադ-Ալի խանի սադրանքով, շահը հրամայում է գլխատել Մուրթուզա-կուլի խանին, որը և պատճառ է դառնում խաների պառակտման և զորքերի դասալքման[13]։

Շահ Թահմասպ II-ի նույն թվականների հրովարտակները՝ ուղղված Արդաբիլի Մուրթուզա-կուլի բեկ Սաֆավիին, նույնպես վերաբերում են այդ կողմերի, ինչպես նաև Կրզրլ-աղաջի, Ուլդրուդի, Քասգարի, Աստարայի, Լենքորանի և այլ վայրերի բոլոր զինված ուժերի (չերիք և իլջարի) շտապ զորահավաքին և արքունի զորակայանը ներկայանալուն[14]։

Այս տեսակետից ուշագրավ է հատկապես շահ Թահմասպ II-ի հիջր. 1136 թ. զիհաջա ամսին (1724 թ. օգ. 21-սեպ. 19) Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանի դիմումի հիման վրա հրապարակված հրովարտակը[15], որը կարևոր տեղեկություններ պարունակելով Դավիթ-բեկի գլխավոր հակառակորդի վերաբերյալ, գալիս է նաև հավաստելու «Պատմության» մեջ նկարագրված դեպքերի ճշգրտությունը։ Այս հրովարտակը ցարդ անծանոթ է եղել գիտական

---

12 محمد کاظم, نامه عالم آرای نادری, مسکو, ۱۹۶۱, جلد اول, ص ۹۹ (այսուհետև՝ Մուհամադ-Քազիմ։)

13 Մուհամադ-Քազիմ, հ. I, էջ 100—101։

14 Bert Fragner. Ardabil zwischen Sultan und Schah. Zehn Urkunden Schah Tahmasps.//Turcica, Revue d' études turques, t. VI, 1975, Paris—Strassburg, doc. 1, 2 3, 4.

15 ՎՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 1452, վավ. 116. Հրովարտակը հրապարակման իրավունքով մեզ է տրամադրել իրանագետ Մ. Ա. Տողուան, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։